

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2018 թ. փետրվարի 28-ի թիվ 29 նիստում

Գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. Առաքելյան

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Սույն փաստաթղթով սահմանվում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում, այդ քաղաքականության նպատակները, խնդիրներն ու իրականացման մեխանիզմները:

ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի (PR- public relations) ոլորտում համահունչ է մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի III խնդրին՝ «Հանրային ներգրավում և ծառայություններ», այն է՝ նպաստել մասնաճյուղի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը, հասարակության հետ կապերի զարգացմանը և հանրային ծրագրերում նրա առավելագույնս ներգրավմանը՝ աջակցելով տարածաշրջանի հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին:

PR ոլորտում ԵՊՀ ԻՄ-ն առաջնորդվում է ՀՀ գործող օրենքներով, ԵՊՀ-ի հանրային կապերի հայեցակարգով, ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի որոշումներով, տնօրենի հրամաններով և այլ իրավական փաստաթղթերով:

Սույն քաղաքականության իրականացման համար պատասխանատու են մասնաճյուղի տնօրենը, հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատուն, որակի ապահովման, դիմորդների և շրջանավարտների հետ տարվող աշխատանքների համապատասխան ստորաբաժանումները:

Այս ոլորտում ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական նպատակներն են.

- PR-ի միջոցով բարձրացնել մասնաճյուղի վարկանիշը, մեծացնել նրա ազդեցությունը տարածաշրջանում և հասարակության մեջ:
- Հանրության մեջ ձևավորել հետաքրքրություն մասնաճյուղի նկատմամբ՝ նպաստելով ուսանողների թվի շարունակական աճին:
- Կատարել մասնաճյուղի խոցելի կողմերի PR:
- Չեզոքացնել մասնաճյուղի նկատմամբ իրականացվող սև PR-ը:
- Խթանել մասնաճյուղում ուսանողների և դասախոսների նախաձեռնողականությունը, առաջխաղացումն ու ճանաչումը,
- Նպաստել տարածաշրջանի մտավոր, տնտեսական, կրթական և գիտամշակութային առաջընթացին՝ հանրային տարատեսակ ծրագրերի մասնակցելու միջոցով:

ԵՊՀ ԻՄ-ի PR քաղաքականության հիմնական խնդիրներն ու իրականացման մեխանիզմներն են.

- ԵՊՀ ԻՄ-ի գործունեության վերաբերյալ իրազեկել հասարակայնությանը մասնաճյուղի պաշտոնական կայքի (ijevan.y-su.am), ինչպես նաև «Երևանի համալսարան» թերթի միջոցով՝ լուսաբանելով միջոցառումները, իրադարձությունները, հայտարարությունները, նորությունները (*ԵՊՀ ԻՄ-ում միջոցառումների իրազեկման և մասնաճյուղի պաշտոնական կայքով լուսաբանման հայտի ձևը ներկայացված է հավելվածում*), տրամադրել տարբեր պաշտոնական կայքերից ձեռքբերված անհրաժեշտ տեղեկատվություն:
- Ընդլայնել և ակտիվացնել մասնաճյուղի գովազդարշավը (տպագրել թռուցիկներ, բրոշյուրներ, փոստային և հեռախոսային տեղեկագրքեր և այլն)՝

այդ գործընթացում առավելագույնս ներգրավելով ուսումնական բոլոր ստորաբաժանումները, ուսանողական կառույցները, հիմնական գործատուներին և շահագրգիռ այլ կազմակերպություններ:

- Պարբերաբար կազմակերպել մամուլի ասուլիսներ, ընդունելություններ, պաշտոնական միջոցառումներ, պատրաստել մամլո հաղորդագրություններ՝ մասնաճյուղի գործունեությունը ներկայացնելու նպատակով:
- Հրատարակել գիտական հոդվածների ժողովածու՝ ապահովելով մասնաճյուղի դասախոսների գիտական աշխատանքների հրապարակայնությունը, նպաստելով տարածաշրջանում ու ՀՀ-ում գիտական մտքի զարգացմանը:
- Կատարելագործել մասնաճյուղի ինտերնետային կայքը՝ ապահովելով անհրաժեշտ լրատվությամբ:
- Բազմազանեցնել տեղեկատվության տարածման ձևերը, միջոցները և շրջանակները (ակտիվ համագործակցել ՁԼՄ-ների հետ)՝ շեշտը դնելով արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ինտենսիվ կիրառության վրա և «ներքին սպառողից» այն ուղղել դեպի «արտաքին սպառող»:
- Մասնաճյուղի գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները նպատակաուղղել նրա դրական հեղինակության պահպանմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև հասարակական վարկանիշի բարձրացմանը:
- Կազմակերպել մասնաճյուղի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություններ՝ նրա գործունեությունը տարածաշրջանի հասարակության արդի պահանջմունքներին համահունչ դարձնելու նպատակով:
- Համակարգել մասնաճյուղի հնարավորությունները՝ ստեղծելու ծառայությունների միասնական ծրագիր՝ ընդգրկելով նրա բոլոր հիմնական ստորաբաժանումներն ու կառույցները:

- Նպաստել մասնաճյուղի ներգրավմանը հանրային կարիքներին ուղղված տեղական, տարածաշրջանային և պետական ծրագրերում:
- Ակտիվացնել առաջարկվող կրթական ծրագրերի և մասնագիտությունների գովազդը, ապահովել անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունը՝ մասնավորապես, տարածաշրջանի հանրակրթական հաստատություններին անվճար տրամադրելով ԵՊՀ հրատարակած «Դիմորդի ուղեցույց»-ը և այլ գովազդային տպագիր նյութեր:
- Պարբերաբար նախաձեռնել և իրականացնել ծրագրեր և միջոցառումներ՝ շրջանավարտների, բարերարների և այլ աջակցողների նվիրատվությունները, շնորհները և ներդրումային ծրագրերը լուսաբանելու և հանրությանը ներկայացնելու համար: Նրանց հետ զարգացնել և պահպանել երկարաժամկետ գործակցային հարաբերություններ:

Մասնաճյուղի ղեկավարությունը գիտակցում է, որ ԵՊՀ ԻՄ-ի PR քաղաքականության մշակումը, ներդրումը և մշտական բարելավումը բուհի առաջնահերթ խնդիրներից են: Քաղաքականության պատշաճ իրականացումը կապահովի մասնաճյուղի բարձր վարկանիշը տարածաշրջանում և հանրապետության բուհերի համակարգում, կնպաստի մասնաճյուղում ուսանողների թվի աճին և բարձր որակավորում ունեցող մասնագետի, հայրենասեր ու պատասխանատու քաղաքացու պատրաստմանը, որը կունենա կարևոր դերակատարություն մարզի և ՀՀ հանրային կյանքի բոլոր ոլորտներում:

Մասնաճյուղի ղեկավարությունը պետք է ապահովի, որ իր բոլոր աշխատակիցները ծանոթ լինեն և ընդունեն սույն քաղաքականությունը, ինչպես նաև մասնակցեն նրա արդյունավետ իրականացմանը: Արդյունքները պետք է ենթարկվեն վերլուծության, անհրաժեշտության դեպքում սույն քաղաքականությունը կարող է վերանայվել:

Մենք հասկանում ենք, որ մեր բոլորի աշխատանքից է կախված հասարակության մեջ բուհի բարձր հեղինակության ապահովումը:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԵՊՀ ԻՄ-ում միջոցառումների իրագրելման և մասնաճյուղի պաշտոնական կայքով

լուսաբանման հայտ

Միջոցառման անվանումը _____

Անցկացման վայրը _____

ամսաթիվը _____
օր/ամիս/տարի Միջոցառման սկիզբը _____ տևողությունը _____

Կազմակերպիչ ստորաբաժանումը (ները) _____

Միջոցառման պատասխանատու(ները) _____

(նշել անունը ազգանունը եւ պաշտոնը)

Պատասխանատու անձանց կոնտակտային տվյալներ

Հեռախոսահամար. ներքին՝ _____ քաղաքային՝ _____

Բջջային՝ _____ Էլեկտրոնային հասցե՝ _____

Միջոցառման բնույթը

ներհամալսարանական (ֆակուլտետային) հանրապետական

համահամալսարանական միջազգային

